ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հունվարի <<22>>-ին (ք. Երևան)

Ծանոթանալով «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության (պետական *գրանցման համարը՝ 282.110.1339826, ՀՎՀՀ՝ 01059264, գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Խուդյակովի փ. 175/1, էլ. փոստ՝ COWPERFOOD@YANDEX.COM, այսուհետ նաև՝ Հայցվոր)* ընդդեմ ՀՀ ազգային անվտանգության ծառայության *(գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104, էլ. փոստ՝ tvtender@sns.am, այսուհետ նաև՝ Պատասխանող)՝* ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալի 25.12.2023 թվականին կայացրած որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր «Կաուպերֆուդ»ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ ազգային անվտանգության ՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալի 25.12.2023 թվականին կայացրած որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին :

Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը դատավորի աշխատակազմին են հանձնվել 17.01.2024 թվականին:

Հայցվորի ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Թիվ ԵԴ2/0270/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024 թվականի փետրվարի 06-ին:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Digitally signed by ATANESYAN ANI 5101901431
Date: 2024.01.23 15:16:57 AMT